***ԲՐՈՒՏՅԱՆ Գ.*, Հայագիտություն և մետահայագիտություն,** գիրք 1, Ե., 2004, 530 էջ:

Մարդկային հասարակությունը իր պատմական զարգացման XXI դար մուտք գործեց գիտելիքի հսկայական պաշարով, սակայն մարդկային բանականությամբ բնության ճանաչողության ոչ լրիվ ընկալմամբ: Ճանաչողություն, որ մտքի իրացման նյութական առաջընթացի հետ մեկտեղ կխթաներ մտավոր կարողությունների մոտեցումը բնության ինքնագոյին: Ճանաչողություն՝ ինքնաճանաչողության միջոցով, մարդկային հասարակության յուրաքանչյուր մասի անհրաժեշտության գիտակցմամբ՝ ամբողջի, այլ ոչ թե միակողմանիորեն՝ ամբողջի կամքի պարտադրմամբ բնականից գոյություն ունեցող մասին: Բնական և բանական օրենքների արարչական ներդաշնակություն՝ առաջնային դարձնելով ոչ թե սպառողական (մարդկային հասարակության կյանքի բոլոր ոլորտներում), այլ բնական վերարտադրությունը: Այս համակարգը տեսականորեն ընկալելու կարևորագույն ասպարեզն է մնում իմաս-տասիրությունը, որը, ըստ պատմական համապատասխան զարգացումների, կարող է ազգային հողի վրա հզոր ժառանգական լիցք կրել և իրենով պայմանավորել համամարդկային արժեքների պահպանումը և զարգացումը: Այս տեսանկյունից, նոր ուղղություն է մշակում ակադեմիկոս Գ.Բրուտյանը՝ հայագիտությունը դիտելով փիլիսոփայական մեթոդաբանությամբ և դուրս բերելով համամարդկային գիտական մտքի համակարգի ուղեծիր, այն բնութագրում է որպես *մետահայագիտություն*:

Գրախոսվող գիրքը ներկայացնում է հեղինակի բազմամյա աշխատանքի արդյունքը, որը հենց այդպես էլ արտացոլվել է ներկա ուսումնասիրությունում՝ որպես երեք բաժիններում, երկու հավելվածներում ամփոփված մի կուռ ամբողջություն: Եթե նկատի ունենանք, որ իր՝ ներկայումս հրապարակվող աշխատությունների շարքի Գիրք առաջինն է, ապա կարելի է ասել, որ հեղինակը ոչ միայն իր տասնամյակների փորձի արդյունքն է ներկայացնում ընթերցողին, այլև գործադրելով իր իսկ կուտակած փորձը՝ պատասխան տալիս դարիս փիլիսոփայական մտքի տեսական մարտահրավերներին:

Գրքի առաջին բաժնում քննարկվում են արդի հայագիտության երկու հիմնախնդիրները:

Առաջինը՝ «Հայագիտության առարկան և մեթոդները», գիտական ժառանգության ամփոփումն է՝ ուսումնասիրվող առարկայի և դրա մեթոդների տեսանկյունից: Անմիջապես խնդիր է առաջադրվում՝ լուծելու *հայ գիտություն* և *հայագիտություն* հասկացությունների հարաբերակցությունը: Գ. Բրուտյանի բնութագրմամբ, դրանք տարբեր են, և նա հայագիտության համար առաջարկում է աշխատանքային վարկածի բնույթ կրող մի սահմանում, որի համաձայն՝ «հայագիտությունը գիտություն է, որի օբյեկտ-լեզուն հայեցի նյութն է, կամ էլ հետազոտում է հայերենի հենքի վրա ստեղծված մետալեզու՝ որևէ խնդիր լուծելու համար» (էջ 13): Ընդ որում «*հայ գիտություն* և *հայագիտություն* հասկացությունների ծավալները մասնակիորեն համընկնում են» (էջ 16):

Հայագիտության առարկայի և մեթոդների ուսումնասիրությանը նվիրված մասում հեղինակը կարևորել է պատմահամեմատական մեթոդը: Իրեն բնորոշ ուսումնառությամբ Գ.Բրուտյանը իր իսկ շարադրանքից դասեր է քաղում և սովորեցնում է ընթերցողին: Այսպես՝ նա այս մեթոդի մասին խոսելիս կարևորում է այն հանգամանքը, որ «Պատմահամեմատական մեթոդն, իրոք, գիտական արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ պահպանվում են դրա կիրառման անհրաժեշտ պայմանները»: Դրանց մեջ նա առանձնացնում է, «մասնավորապես, այնպիսի սխալից խուսափելը, ինչպիսին է *եզրակացությունը ձևակերպելու ընթացքում հակասող դեպքերը հաշվի չառնելը*» (էջ 18-19): :

Այսօր պատմագիտության բնագավառում խնդիրների մի ստվար մաս բաժին է ընկնում այս դրույթի անտեսմանը: Եթե մի կողմ թողնենք այս դրույթից խուսափող առանձին գիտնականների վրիպումները, ապա, կարելի է ասել, որ հայոց պատմության և պատմական աշխարհագրության նենգափոխողները այն դարձրել են «մեթոդաբանական» զենք և արդի քաղաքական նպատակներով աղավաղում են հայագիտության այդ ոլորտներից եկող տեղեկությունները: Այս խնդիրներին հեղինակը անդրադարձել է «Օբյեկտիվությունը որպես հետազոտության մեթոդաբանական հնար» վերտառությունը կրող ենթաբաժնում: Գ. Բրուտյանը որպես հայագիտության կարգախոս նշել է՝ «Ամեն ինչից պետք է վեր լինի ճշմարտությունը»: Հեղինակը հայագիտության ասպարեզում օբյեկտիվության պահանջի աչքի ընկնող խոտորում է նշել թերահավատությունը հայ մշակույթի նկատմամբ, ինչի հետևանքը «այս կամ այն պատճառով ու նկատառումով թյուր պատկերացում ստեղծելն է հայ ժողովրդի պատմության, հոգևոր և նյութական մշակույթի վերաբերյալ», ուստի Բ. Բրուտյանը որոշ հետազոտողների՝ «հայագետ լինել՝ ամենևին չի նշանակում հայասեր լինել» կարգախոսին հակադրում է՝ «կարող ես հայասեր չլինել, բայց պարտավոր ես որպես հայագետ՝ օբյեկտիվ լինել և չմեղանչել ճշմարտության դեմ» կարգախոսը (էջ 23-24): Այս բնագավառի համար առավել վտանգավոր երևույթ է դիտարկվում *քաղաքականացված* դիրքորոշումը գիտության, տվյալ դեպքում՝ հայագիտության մեջ: Հեղինակը որպես հայագիտության ուսումնասիրության մեթոդ նշել է հերմենեվտիկան, իսկ որպես տեքստի մեկնաբանիչ եղանակ՝ համատեքստային և ենթատեքստային վերլուծությունը: Ապացուցողական մեթոդը կարևորելով որպես սխալ ելակետային դրույթներից խուսափելու անհրաժեշտ միջոց՝ հեղինակը առաջարկում է հիշել հին իմաստունների միտքը. «Իմաստունը ոչ մի բան չի պնդում առանց ապացուցման» (էջ 25):

Երկրորդ հիմնախնդիրը՝ «Հայագիտություն և մետահայագիտություն», Գ. Բրուտյանը լուսաբանում է մետագիտության տեսանկյունից, որի առարկան է իր իսկ առաջարկած գիտության բնույթի, կառուցվածքի և այն մեթոդների հետազոտությունը, որոնցով գիտությունը իրականացնում է իր ուսումնասիրությունները: Գիտնականը այն համոզմանն է, որ մետագիտություն կարող է ունենալ ցանկացած գիտություն, բացի փիլիսոփայությունից, «քանի որ չկան ավելի լայն ծավալի հասկացություններ, քան փիլիսոփայության մեջ գործառող հասկացություններն են» (էջ 41):

Արդեն իսկ զարգացնելով հայագիտության տեսական ըմբռնումը և իր իսկ առաջարկած բանաձևը համադրելով որպես աշխատանքային վարկած, զարգացող մետահայագիտության համակարգի հետ՝ հեղինակը տալիս է հետևյալ բանաձևը.

«Հայագիտությունը կարելի է սահմանել որպես տեսություն գիտական գիտելիքի տարբեր բնագավառներում դրսևորվող հայ իրականության բնորոշ առանձնահատկությունների մասին, որոնք հետազոտվում են համապատասխան գիտությունների կողմից՝ վերջիններիս ներհատուկ մեթոդներով»: Քայլ առ քայլ հետազոտելով հայագիտության հիմնարար հասկացությունների համակարգը՝ Գ. Բրուտյանը մոտենում է մետահայագիտության ըմբռնմանը և առաջարկում հետևյալ սահմանումը. «*Մետահայագիտությունը* կարելի է սահմանել որպես գիտություն, որը հետազոտում է հայագիտության բնույթը, տեղը գիտությունների համակարգում, ուսումնասիրության մեթոդները» (էջ 46):

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է Դավիթ Անհաղթին, հատկապես տրամաբանության նրա ուսմունքին: Այստեղ ամփոփված նյութը հեղինակի՝ տասնամյակների ընթացքում կատարած աշխատանքի արդյունքն է՝ համահավաք աշխատանքների տեսքով, որոնք արդեն արժանացել են գիտական հասարակայնության բարձր գնահատականին և նորովի հնչողություն են ստացել այս մենագրության մեջ, քանզի այն հրատարակության նախապատրաստելիս, Գ. Բրուտյանը հաշվի է առել այստեղ ընդգրկված և տարբեր երկրներում զեկուցված նյութի քննարկման արդյունքները: Այս բաժինը ամփոփում է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության հետազոտությանը նվիրված՝ ակադեմիկոս Գ. Բրուտյանի հետազոտությունների շարքը, որն իր հիմնական տեղն է զբաղեցրել հայ փիլիսոփայական մտքի ուսումնասիրության պատմության մեջ:

Գրքի երրորդ բաժնում արտացոլվել է Գ.Բրուտյանի նուրբ ճաշակը թարգմանական արվեստի փիլիսոփայական ընկալման բնագավառում: Թարգմանությունները վերլուծելով մտքի տրամաբանական ձևերի և օրենքների տեսանկյունից՝ հեղինակը իր իսկ մշակած սահմանումով հայերենը և օտար լեզուները դիտարկել է մետալեզու և օբյեկտ-լեզու համադասման համակարգում: Խոշոր են բրուտյանական վրձնաշերտերը հայ թարգմանական արվեստի այդ յուրահատուկ տեսական վերլուծության կտավի վրա: Հայ իրականությանը բնորոշ Թարգմանչաց շարժումից, նրան նվիրված տոնից և եկեղեցիների անվանումներից մինչև աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանի և հերմենեվտիկայի խոշորագույն ներկայացուցիչ Գ. Գադամերի գնահատականների վերլուծությունները Գ. Բրուտյանին հնարավորություն են տալիս թափանցելու թարգմանչական արվեստի նրբագույն երանգների փիլիսոփայական ընկալման խորքերը: Կարելի է ասել, որ իր գիտական հայեցակարգով նա ոչ թե թարգմանական արվեստի գծային պատկերն է ուրվագծում, այլ նրան տալիս է մտավոր շունչ ու հոգի՝ հասկանալու համար բնագրի անկրկնելիությունը և այն մեծարժեք առաքելությունը, որ ստանձնում է թարգմանիչը՝ ինքը ևս ձգտելով կատարելության:

Մի զարմանալի մտքի թարմության և մտքով սավառնելու զգացում ես ապրում՝ կարդալով ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի բնության ճանաչողության հզոր լիցք պարունակող երկը: Այդ ընկալումը ծնվում է այն *մետազգացումից*, որ չես ցանկանում ավարտել ընթերցումդ, և այդպես առաջանում է ինտելեկտուալ չհագեցվածության զգացում, որը և *գիտության զարգացման կարևոր նախապայման է*:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.
Պատմական գիտությունների դոկտոր